

## ՀՀ Արմավիրի մարզի Կողբավան համայնքի ղեկավարի 2014 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվություն

Հարգելի ընկերներ, ավագանու անդամներ, հրավիրվածներ եւ, Կողբավան համայնքի ղեկավարս, ներկայացնում եմ Ձեզ հաշվետվություն Կողբավան համայնքում 2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ:

Ինչպես գիտեք Կողբավան համայնքն ունի բազում հիմնախնդիրներ, որոնցից հատկապես կառանձնացնելի խմելու ջրի բացակայության հարցը: Գյուղը խմելու ջրով ապահովելու հարցով զբաղվելուն զուգընթաց կազմակերպվում է համայնքի միջոցներով ջրի մատակարարումը հարևան Երվանադաշտ համայնքից, հատուկ այդ նպատակին ծառայող ԳԱԶ մակնիշի մեքենայով, որը շաբաթական երկու անգամ խմելու ջուր է բաժանում համայնքի բնակչությանն անվճար հիմունքներով:

Համայնքն անելիքներ ունի նաև կրթության բնագավառում, քանի որ Կողբավանի դպրոցահասակ երեխաները սեփական համայնքում դպրոց հաճախելու հնարավորությունից զրկված են: Դպրոցահասակ երեխաներին հարևան Վանանդ համայնք, որտեղ կազմակերպվում է նրանց ուսուցումը, հասցնելու համար ևս հատկացված է ավտոմեքենա ՌԱՖ մակնիշի, որն առավոտյան տանում և դասերի ավարտից հետո ետ է բերում նրանց համայնք:

Առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքներից ևս կառանձնացնելի նաև հողօգտագործողներին շուկակայականից ցածր գնով ստացված ագտական պարարտանյութերի՝ պարկը 6000 դրամ արժեքով 15550կգ, պարկը 7000դրամ արժեքով 1700կգ ֆոսֆորական պարարտանյութ, 5000 լիտր դիզելային վառելիքի՝ լիտրը 350 դրամ արժեքով բաշխումը, ինչպես նաև 510կգ առվույտի սերմացու արժեքը 1500դրամ, 100կգ եգիպտացորենի սերմացու 350դրամ արժեքով և 1200կգ գարու սերմացու 200դրամ արժեքով

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ցուցանիշների մասով .

Սեփական եկամուտների մասով պլանային առաջադրանքը կատարվել է 64,3 տոկոսով՝ պլանային 1890,0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 1215,8 հազար դրամ եկամուտ, որն էլ ձևավորվել է հետևյալ ուղղություններից.

ՀՈՂԻ ՀԱՐԿ – պլանային առաջադրանքը կատարվել է 57,5 տոկոսով՝ 1000,0 հազար դրամի դիմաց 575,4 հազար դրամ հավաքագրվելով:

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ գծով պլանային առաջադրանքը կատարվել է 70,4 տոկոսով: 90,0 հազար դրամ կիսամյակային պլանի դիմաց արձանագրվել է 63,4 հազար դրամի մուտք:

Համայնքի սեփականություն համարվող հողերի ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ – պլանային 700,0 հազար դրամի դիմաց մուտքագրվել է 577,0 հազար դրամ : Պլանային առաջադրանքը կատարվել է 82,4 տոկոսով:

Չի արձանագրվել մուտքեր ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ՝ պլանային 100,0 հազար դրամի դիմաց:

Համայնքին տրվել է դոտացիա պլանային 1795,4 հազար դրամի դիմաց 1795,4 հազար դրամ:

Առաջին կիսամյակի ընթացքում կատարվել են ծախսեր հետևյալ կտրվածքով՝

Աշխատավարձ՝ 2811, 0 հազար դրամ:

Կազմակերպվել է տոնական միջոցառում ԿԱՆԱՆՑ ՄԻԱՄՍՅԱ տոների կապակցությամբ:

Կատարվել է էլեկտրոգիայի վարձավճար 41,0 հազար դրամի չափով:

Համայնքի հիմնախնդիրներն են, ինչպես արդեն նշվեց.

1. Խմելու ջրի բացակայությունը
2. Կրթության բնագավառում՝ դպրոցաշինությունը
3. Գազաֆիկացումը

Համայնքի ղեկավար



Հ. Քոչարյան